

ցեն մահմետականները երկրադրժական զբաղմանց, ոստայնակութեան եւ ուրիշ օգտաշատ արուեստներու մէջ, որոնք այդ ազգին հարատւութեան հիմերը կը կազմեն: Անոնք (հայերը) ընդհանրապէս շատ արհամարհուած են իրենց Մահմետական զբաղիներէն, որոնք անարժէք, անխոյժ, բարձրարարաւ այլ սակայն ստորնամիտ ցեղ մըն են, նշանաւոր խարդախութեան մէջ, իրենց խիլ ցեղին, ազանդին նախապաշարմամբ յատկապէս կապուած»⁽⁴⁰⁾: Անդլիացի զբողին խարանիչ այլ որոշ, ճշգոյ, վճռական այս արժէքաւորումը, ինքնին ցոյց կու տայ իբր միակ տէր կովկասեան մշակոյթին եւ արտադրութեանց, որոնց կարգին գորգերն ալ, Հայերը, բան մը որ ուրիշ օտար մը՝ Իսլն Հաուզալ արդէն լիահագագ ժ դարուն ըսած էր, ուրեմն անցնող ութը դարերը ոչինչ փոխած էին երկրին արտադրող եւ ոչ արտադրող տարրերուն գերէն:

Պահ մը եթէ չըլլային օտար այս վիայութիւնները, կովկասեան կոչուած գորգերուն զծածեւերը, իրենց ծագմամբ, արտայայտութեամբ, էացմամբ, ինքնին ցոյց կու տան քրիստոնէայ եւ մանաւանդ հայ ծագումը: Գորգերու իմ առուծախիս ընթացքին, հանդիպած եմ անցեալ դարու կովկասեան գորգերու, գեղեցիկ, ճաշակաւոր, ներգաշնակ գոյներով, թէեւ վառ, կենսունակ, որ հայ ձեռագրաց դոյրները կը յիշեցնեն, ուր հայկական խաչեր, երկրաշափական զծածեւեր, ձեռագրական գօտիներ կան: Նշանակալից էր 1931ին Թաւրիզ գնած մէկ շատ գեղեցիկ Ծիրվանս՝ որ այժմ մաս կը կազմէ Mrs. W. L. Hartmanի, Wichita Kansas հաւաքածոյին, 50-70 տարուան հնութեամբ, կատարեալ նմոյշ մը վերջին ժամանակներու հայակովկաս գորգաշինութեան, որուն յատուկ գոյներուն եւ զծածեւերուն վրայ աւելցած է հազուադիւտ մարգածեւեր, այսինքն երկու ազջիկներու ամբողջ հասակով պատկերները, իրենց բոլոր ձեւով, տարազով մանրամասն, երկու կարմրերես, բացերես հայ պարմանուհիներ, որոնք թեւատարած եւ շնորհալիօրէն կը պարեն: Ընդհանրապէս կովկասեան գորգերու մէջ հազուադիւտ է գտնել այսքան համաչափ եւ մանրամասն կատարելութեամբ ներկայացուած մարգածեւեր: Հոս ենթականերուն աչքերն ու յոնքերը, իւրաքանչիւր ձեռաց հինգ մատներուն եւ նոյնիսկ անոնց ծայրի հիմային հետ որոշ ներկայացուած են:

1844ին Baron Von Haxthausen կը վկայէ որ Ծամշատինսքի շրջանին մէջ՝ ի Հայկական կովկաս՝ «թաթարները եւ հայերը կը շինեն գորգեր եւ շալեր»⁽⁴¹⁾: Իսկ Երեւանի շրջանի հայացած Եզրտիներուն իր այցելութեան առթիւ կը վկայէ. «մենք մտանք քանի մը վրաններ, եւ դտանք կիները գորգ հիւսելով զբաղած. — արուեստ մը՝ որ անոնք լաւ կը հասկնան»⁽⁴²⁾: Ասկէ երեք տարի վերջ, 1847ին՝ Austen

(40) A Journey from India to England. — 1818, London, p. 226.

(41) Transcaucasia. — 1854, London, p. 185.

(42) Անդ, էջ 30: